

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուլկարիոյ Համար


Տարեկան ֆրք 10

վեցամսեայ " 5

ԿԱՆԻՒԿ

20

ՍԱՆԴԻՄ



ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Արտասահման

Տարեկան ֆրք 12

վեցամսեայ " 6

ԿԱՆԻՒԿ

20

ՍԱՆԴԻՄ

ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԻԵԾՏԱԿԱՆ

Կը հրահարակուի հարաք օրերը : Ծա-
նուցման տողը 10 Սանդիմ : Երկու քիւ ա-
ռաջ հրահարակուած քերքը 40 Սանդիմ :
Զհրահարակուած գրու քիւ նը ես յտուիր :

Հասցէ

DIRAN PAPAZIAN

RUE DRAGOMAN K. STEPAN

(BULGARIE)

VARNA

ԿԱՐԵՒՈՐ

Պուլկարիոյ առևտրական օրինա-
գրքին յաւելեալ մէկ նոր յօդուածին
տրամադրութեանը համաձայն, վաճա-
ռականք և խանութպանք պարտաւոր են
իրենց Թապէշըներուն և առևտրական
գործերուն վերաբերեալ բացատրու-
թիւնը երթալ տալ նօտարներուն և ա-
նոնցմէ վաւերագիր մը ստանալ : այս
պարտականութիւնը մինչև ներկայ Յու-
նիսի վերջը չի կատարողը 100էն մին-
չև 1000 ֆրանք տուգանքի պիտի են-
թարկուի :

Ազն. Միքայէլ էֆ. Յակոբեան պիտի
հողայ, ինչպէս որ ասկէ առաջ խոստա-
յած էր :

Յակոբեան էֆ. անցեալ շաբթու մի
քանի ճարտարապետներու ընկերակ-
ցութեամբ ազգ. հիւանդանոց երթալով,
չէնքին բարձրանալիք տեղւոյն վրայ
պէտք եղած նախնական քննութիւնը
կատարեր է : Միքայէլ էֆէնտիի այս
բարեբարութիւնն ալ ազգովին շնորհա-
կալութեան արժանի է :

Ներկայամսոյս 1ին հրահարակուած
պաշտօնական տեղեկագրի մը նայելով,
նոյն հաստատութեան ընդհանուր պա-
տասարելոց գումարն է 974, որոնց 719
այր մարդիկ են և 255ը կին :

ԱԶԳԱՅԻՆ

ԱԶԳ. ՀԻՒԱՆԴԱՆՈՅ

Նկատելով որ Կ. Պոլսոյ ազգային
հիւանդանոցի պատասպարելոց թիւը օր
օրի աւելնալու վրայ է, և այդ հաստա-
տութեան երկու հարկերը անբաւական
են, որոշուեր է երրորդ հարկ մ'ալ կա-
ռուցանել, որուն շինութեան ծախքը

Յայտնի է որ Թիֆլիզի «Արձագանք»
լրագիրը ասկէ քանի մը ամիս առաջ
ուրիշամսեայ դադարման դատապարտու-
ած էր. այժմ Ռուսական լրագիրներէ
կը տեղեկանանք թէ Ռուս կառավարու-
թիւնը յիշեալ լրագիրը բոլորովին խա-
փաներ է :

ՀԵՐՔՈՒՄ

... խմբագիր տէր,

Օրուանս թիւ 37 « Զարթուածի » երկու խօսք ք վերնագրով յօդուածին մէջ Զարթուածի խմբագիրք յայտարարած են որ, իբր թէ ես զղջացած լինիմ այն հերքմագրոյն համար, զոր տուած եմ տեղական հայ թերթերու թիւ 14րդ Զարթուածի մէջ « Զայ դաւաճան մը ք վերնագրով յօդուածին նկատմամբ . ասիկա սուտ մ'է զոր այսօր մէջտեղ կը նետեն . ուստի այսու եւ կը յայտարարեմ բացարձակ կերպով որ բնաւ հերքմագրոյս համար զղջացած չեմ և թէ նորէն կը կրկնեմ որ Տիար Տ. Ճգնաւորեանը դաւաճան կոչելու համար չէ թէ շոշափելի այլ ո՛ր է իսկ մի փաստ չի կայ :

Հաճեցէք ընդունիլ յարգանացս հաւաստին :

17 Յունիս 1898 Ղ. ԹԱՀՄԻՍԵԱՆ

Վառնա

ԵՌԱՄՍԵԱՅ ՔՆՆՈՒԹԻՒՆ
ԱԶԳ. ԵՐԿՍԵՈՒ ՎԱՐԺԱՐԱՆԱՅ
ՎԱՌՆԱՅԻ

Ազգ. երկսեռ վարժարանաց եռամսեայ շրջանի հրապարակային քննութիւնք կը սկսին ամսոյս 21ին եւ կը տեւեն մինչեւ 29.

Քննութիւնք տեղի կունենան մանչերու վարժարանին մէջ. առաւօտեան ժամը 8½ էն 12 և յետ միջօրէի 2—6 իսկ կիրակի օրերը՝ առաւօտեան ժամը 9 ու կէսէն—12 եւ կէս օրէ վերջ 2—6:

Շաբաթ, 27 Յունիս. 9—12 մանկապարտէզի քննութիւնք:

Ստիպողաբար կը խնդրուի կրթատէր հասարակութենէն որ բարեհաճի իր ներկայութեամբ քաջալերել ուսանողութիւնը իր առաջին քայլերուն մէջ:

ՏԵՐՈՒՆՈՒԹԻՒՆ
Ազգ. երկսեռ վրժ. Վառնայի

Դիտող. — Մասնաւոր հրաւիրագիր ուղղուած չըլլալով, կը խնդրուին երկազդարարութիւնը իբր այն նկատել:

ՇԱԲԱԹԱՊԱՀ ԲԷՐՍԻՏԷ ՏՈՒՏՈՒՆ

Չորուկ, բնականէ՞ն թէ արեւէն քիչ մը սեցած, 35 տարեկանի մօտ կին մըն է Բէրսիտէ տուտուն, որ Վառնայի հայ ընտանիքներու մէջ շաբաթապահութիւն քարոզելու նորալուր պաշտօն մը ըստանձնած է: Մովսէսէն սկսեալ մինչև Դանիէլ, Ղովտէն սկսեալ մինչև Վաւիթ, ճամբուն վրայ դտնուած բոլոր անձնաւորութիւնք իրեն համար մէյուէկ աղբիւրներ եղած են հաստատելու թէ, կիրակին պահելը սրբապղծութիւն է, կըրօնքի հակառակ է. այլ պէտք է միայն և միմիայն շաբաթ օրը սուրբ պահել, որուն հակառակողները պարզ ոճրագործներ կը համարուին եղեր:

Այս դարավերջի քարոզչունանցեալ օր ճորթ թաղը բնակող Հռուփ տուտուն տունը կը մտնէ և բարեւելէն ետքը ճասնաբանեային «Յիշեալ» սրբել զօր շաբաթու պատուէրը իրեն բնաբան ընտրելով, կը սկսի քարոզի, որ մէկ ժամ կը տեւէ: Հռուփ տուտուն, բերանը բաց, մինչեւ վերջը մտիկ ընելէ ետքը կըսէ.

— Վայ դիւտս, չըսես, աստար տարուան կիրակինիս ալ պաթալ պիտի ընենք:

— Շաբաթ օրը պէտք է կիրակի պահենք:

— Քա ճանրմ շաբաթ օրը հրեաներունն է, թող քի հիմա անոնց ի՞նչ ատերն ալ մեզի հետ կիրակին կը բռնեն կ'որ ես:

— Շաբաթը չի պահողը մեծ մեղաւոր մը ըսել է, քաւութիւն թողութիւն չի կայ:

— Տէր ողորմեա, տահա նէլէր

վաղն ալ պէլքի ելլաք ուրբաթը չի պահողը մեղաւոր է ըսէք:

— Հրամանքդ Յովհաննէսին վրկայութեանը չե՞ս հաւատար:

— Էյ տողրուսու . . . անգըրգ եալանին խօսքին պիտի հաւտայի:

— Ի՞նչ կըսես կոր:

— Նաֆիլէ սիրտդ մի՛ հատցուներ. ես անիկայ պղտիկուց կը ճանչնամ. սուտը բերնին մէջ կը լողայ, անոր խօսքին ո՞վ կը հաւտայ:

— Ո՛ր, Յովհաննէսին համար կըսէք:

— Իշթէ, սա քէօջէի ախտէր օհաննէսին. անոր համար չե՞ ըսածդ:

— Ձէ՛, ես Յովհաննէսու աւետարանիչին համար կըսեմ կոր, որն որ Սաղաթիէլ մարգարէին 617րդ գլխու 265 համարին ըսածը կը հաստատէ, իրեն վկայ առնելով գիրք չորրորդ թագաւորութեանցէն տիրոջը խօսքը:

— Աֆ կընես ճանըմ խաթուն, աղքարողիդ «փառք հօր»ը գի՛ր, զիս վար մի՛ գներ երթալիք բաղնիքէս, բախլայով միսս ալ պէլքի տակը առաւ, ըսելով շաբաթապահուն ճամբու դնելէ ետքը խահանոց կը վազէ, ուսկից ըստուգիւ բակլայով մսին այրելուն հոտը սկսեր էր գալ:

Մենք բան մը չենք ըսեր այսկարգի միջնադարեան քարոզներու վրայ, որոնք կորուսած ըլլալով արդէն իրենց կարեւորութիւնը, չարժեք ըստ ինքեան խնդրոյ նիւթ ընել և անոնցմով զբաղեցնել մեր ընթերցողները, միայն կը յանձնարարենք բոլոր անոնց, որոնք Բէրսիտէ տուտուին ներկայութիւնը վայելելու զժբաղդութիւնը կունենան, անոր հետ այո՛ կամ ո՛չ ըսելով ժամավաճառ չըլլան, այլ սա երկու բառով ճամբեն զինքը:

— Բարի եկար:

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ

(Աժանս Բոժոժիկ և Ընկ.)

Ճգնաւորաշարժումական պատերազմը սկսաւ. մէկ երկու բաղնումներ տեղի ունեցան յառաջապահ . . . գրիչներու մէջ:

Եթէ համաձայնութիւն մը չի գոյանայ, քուսկութներու խզում մը մօտայրուտ կերեւի:

Եօթեւտասնից ժողովը միաձայնութեամբ որոշեց 268 տողով «Երկու խօսք» հրատարակել:

Ծանօթ բաջամարտիկ գրագետ մը, չորեքշաբթի օրը, սրճարանի մը մէջ, ՀԱՆԵՆՏԵՑԻ վարպետէ մը «Տիւշտիւ կէօնիւլ ամաղ, Արփիարըն պէլալըսըն»ին խաղը դաս առաւ:

Հրանտօ—Արփիարօ պատերազմը

Ապագայ հաշտութեան պայմանագրի 26րդ յօդուածի տրամադրութեանը համաձայն Արփիարի դաւաճանութիւնը հաստատող տօքիւմէնները յանձնուեցան . . . Տէլվաճի Մըստաֆային: Հրանտի կեղծարարութիւնը հաստատող թուղթերն ալ յանձնուեցան . . . պախալ Եօրկիին: Թահընի և բէքմէզի տակառներուն մէջ պեղումներ սկսան կատարուիլ:


Արուեստակեալ—Երիտասարդ 70նոց ծերունի մը, թողանը տեղը համարուող վար—եքմէզ միւսիւ ֆինկֆօնկին հետ համախորհուրդ, «Հայելի»ն բամբասելէ ետքը, որոշեցին հռչակաւոր ուէրիւպիւք գլխարկը 1900 թուականին բացուելիք Բարիզի արուեստահանդէսը զրկել, յատկապէս վարձուելիք . . . չէօր—առապասիով:

Ռուսճուգ

Անտրամաբան ՔիլօգօՔիլքուսն տիրացուն վերջին շաբթսւս ստացած է այն մարդուն գէմքը, որ գիշերը սաստիկ ծարաւէն արթնցած՝ մութին մէջ ջուր կը բնտռէ, ու փոխանակ ջուր գտնելու, մուկախառն բաժակ մը քացախի կը հանդպի և զայն ի մի ումպ կը տնկէ:

Ծիծաղ

ԾԱՆՈԹ ԴԵՄՔԵՐ



Բ.

Գ. — Ա.

Վայելչահասակ, բաջարանջ, ասպետական իրան, պեխերը թաւ, ոլորուն և ծայրերը՝ աղբսագիր տալու պէս վեր տնկուած՝ դժգոյն և խտամբեր վանականի երեւոյթով երիտասարդ մը. կանանց ընկերութենէն փախչող. ինքն իր մէջ ամփոփուած, միշտ մտածելով կը քայլէ մայթին վրայէն, գաւազանը, իր անբաժանելի ընկերը մէջտեղէն հորիզոնական ձևով բռնած, ձախ գրպանը ունենալով անպատճառ լրագիր մը, հոգ չէ ինչ լիզուէ որ ըլլայ: Մեծ դժուարութեամբ բայց անուշ ժպիտով մը կը պատասխանէ իր դէմը ելնող բարեկամին բարեկին:

Պաշտօնատեղիէն գարեջրատուն, հոնկէ ալ ընթերցարան, օրուան մէջ մէկ քանի անգամներ քուռ կընէ այս տեղերը: Անյապ գրող մ'է ամեն բանի, ամեն սեռի և ամեն գրականութեան՝ զոր 10—20 անգամ կը գրէ, կ'աւրէ կը սրբագրէ առանց կարեւորութիւն տալու. . . խոշոր տառասխաններուն:

Ինքզինքը երկիւղած կը կեղծէ, միստիքական հաւատացեալ մը. երբ ժողովրդականութիւն շահելու պէտքը տեսնէ, գաղափար և սկզբունք մէկ կողմ նետելով կրօնական յօդուած մը կը գրէ. հանրութեան խղճին ու հոգւոյն էն նուրբ թելին գպշելու արհեստը լաւ գիտէ: Գիւրափառ նիւթի մը պէս շուտ կը բարկանայ, ու երբ հակառակորդը ուզէ ինքզինքը պաշտպանել՝ պարօնը անմիջապէս իր վկայները կը ղրկէ, բայց եթէ թշնամին չի վախցող մէկն է. գործը անուշի կապելով գոհացում՝ կուտայ միշտ. . . գրիչով: Կը սպառնայ՝ բայց չի գործադրեր, այնչափ ներողամիտ ու երկչոտ է որ՝ առջի օրուան մէկ գրածը երկու օր ետքը կը հերքէ: Եթէ չափէ դուրս բարկանայ՝ գրասե-

ղանին վրայ գտնուած գրիչները ու քանակները ասդին անդին կը նետէ, կաղամարը կը կործանէ և յարձակողական դիրք մ'առնելով դիմացինը զարնելու համար կը քաշէ իր սիկառնիկը. . . X

ՀՈՍԿԷ ՀՈՆԿԷ

ՄԱՋԻ ՆԵՐԿԻՆ ՄԷԿ ՓՈՐՁԱՆՔԸ

Ինչպէս յայտնի է, աշխարհի ամեն կողմը հրատարակուած լրագրաց մէջ յաճախ մազի համար շատ տեսակ ներկերու ծանուցումներ կը կարդացուին և իգական սեռի ամենաստուար մասը կարեւորութիւն կուտայ այդ ներկերուն, որոնցմէ շատ անգամ կը խարուին ու կը փնասուին: Ամերիկեան բժշկիչներէն շատերը կը պնդեն թէ կանանց մազերուն հետզհետէ կարճնալուն կամ քիչնալուն մէկ գլխաւոր պատճառն ալ այդ մազի ներկերուն չափէ աւելի կարեւորութիւն տրուելն է, ու կը պատմեն զուարճալի կամ ցաւալի տեսարաններ, որոնք առաջ կուգան մազի ներկերէն: Այսպիսի տեսարան մը վերջերս ի Բարիդ աղնուական և հարսւտ տիկնոջ մը գլխուն պատահած է: Տիկին Մառի Տիւփալ, որ իրեն փառք և պարծանք կը համարէր մազերուն գեղեցկութիւնը ու փայլունութիւնը, օր մը պարահանդէսի հրաւեր ընդունած ըլլալով, կ'որոշէ երթալ. նոյն միջոցին արդուզարդի հայելին առջև դնուելուն՝ անոր մէջը կը նայի, ու տեսնելով որ մազերուն մէջ մէկ քանի ձերմակներ կան, կը գոչէ.

— Ո՛հ, ալ ևս ծերութեան ձամբան բռներ եմ. ես որ մինչև հիմա մազի ներկ գործածած չեմ, ասկէ ետքը պիտի պարտաւորիմ գործածել:

Աւ անմիջապէս քանի մը լրագիրներ բերել տալով, 8—10 տեսակ մազի ներկերու ծանուցումներն աչքէ անցունելէ ետքը ա-

նանցմէ մէկը գնել կուտայ . շիշին վրայ փակ-
ցուած ոսկեգօծեալ հրահանգին կը հետեւի
ու գիշերը պառկելէ առաջ ներկը մազերուն
կը քսէ : Հետեւեալ օրը պարահանդէս պիտի
երթար , ուստի կը կանչէ սպասուհին ու
կրօէ .

— Ֆլօռա՛ , օ՛ն , մազերս սանտրէ՛ ,
տեսնենք սա ներկին փայլունութիւնը :

Սպասուհին խօզանակը թրջելով կը ըս-
կսի տիկնոջ մազերը սանտրել , բայց հագիւ-
թէ խօզանակը քանի մը անգամ կը քսէ
սարսափահար կը պոռայ .

— Ո՛հ , ի՞նչ բան է այս .

Տիկինը ապշութեամբ եւ յուզմամբ ա-
թոռէն կելլէ ու կը հարցնէ .

— Ի՞նչ կայ , ի՞նչ կըսէք .

— Ի՞նչ պիտի ըլլայ , կը պատասխանէ
սպասուհին , բսուած ներկին թունաւոր աղ-
դեցութեամբը գլխէն թափած մազերուն ծը-
րարիկները ցուցնելով :

Հիմա տիկնոջ գլուխը դռուի պէս մերկ
է մնացեր , և դժուարին չէ մտաբերել անոր
զգացածը՝ իր փառքն ու պարծանքը եղող
մաշերէն զրկուելուն առթիւ :

Տիկնանց և օրիորդաց ուշադրութիւնը :

ԱՆՅԱԳՐԱՏԱՆ ՄԷՋ

Անցեալները Փարիզի պարոն մը կ'որո-
շէ իր կինը քանի մը ամսուան համար օդա-
փոխութեան շրջել յիտալիա բնակող իր մօ-
րը տունը . ուստի անոր անցագիրը մը առնե-
լու համար անցագրատուն կը դիմէ :

Պաշտօնեան ըստ սովորութեան կը հար-
ցնէ .

— Տիկնոջ հասակը .

— Տասը մատ բարձրութեամբ կրուն-
կով կօշիկ հագած ատենը երկայնահասակ է :

— Յոնքերը ու մազերը .

— Ներկուած միջոցին բնականաբար սև
կըլան :

— Աչքերը .


— Զանոնք ներկելը անկարելի ըլլա-
լուն , իրենց բնական վիճակին մէջ շագանա-
կագոյն են :

— Երեսին գոյնը .

— Առանց ներկի և առանց բուսորաի
չըլլալուն պատճառաւ՝ միշտ ճերմակ :

— Տարիքը .

— Իբր խօսքին նայելով՝ 28 , բայց եթէ
դուք այնչափ մ'ալ վրան աւելցնէք , սխալ
բան մը ըրած չէք ըլլար :



ԵՐԵՍՈՒՆ ՏԱՐԻ ԱՆԿՈՂՆԻ ՄԷՋ

Մարդկային ընկերութենէ վրէժ առնե-
լու համար , երեսուն տարի շարունակ անկող-
նոյ մէջ մնալ , առանց ոտքը մահճակալէն վար
դնելու , նորութիւն մ'է որ Անգլիայէն կու-
գայ այս անգամ փոխանակ Ամերիկայէն գա-
լու :

Անգլիոյ Թէյնմաութ հրապարին մէջ
պառաւ աղջիկ մը ահա այդպէսով փարատել
ուզած է իր . . . տունը մնալուն վիշտը :

Երեսունը ութ տարի անընդհատ ամու-
սին մը փնտթելէն վերջը եւ համոզուելով որ
գտնելիք չունէր , օր մը , կատգած՝ սենեակը
մտաւ , հանեց շրջազգեստը , գուլպաները , ճեր-
մակեղէնները եւ նետուեցաւ անկողին մէջ՝
վերմակը գլխուն քաշեց եւ . . . այդ վիճակին
մէջ 30 տարի եւս ապրեցաւ :

Թէեւ այդ միջոցը բաւական չէր ամու-
սին մը գտնելու համար , բայց բժիշկները
հաստատեցին թէ այդ երկարժամանակեայ
անկողնակեցութիւնը շատ նպաստաւոր եղած
էր իր առողջութեան . այդ եզակի օրիորդը
մեռած ատենը 225 լիպրա կը կշռէր :

Խեղճ աղջիկ , չի կրնալ ամուսնանալուն
համար երեսուն տարի անկողին մէջ մնալ ,
ի՞նչ համբերութիւն , ի՞նչ կամք :

Թէեւ իրաւ է որ անկողնոյ մէջ ապրիլն
ալ կէս մը առաքաստի մէջ մտնել է :

ԻՆՉ ԲԱՆ ԿՈՒՏՈՒԻ

(ՖԱՆԹԵԶԻ)

Մարդ չկայ աշխարհի վրայ որ բան մը չուտէ:

Այս կանոնին բացառութիւններն են Սուլէի, Մէռալթի և . . . ամեն ճշմարիտ արուեստագէտ որ Հայ ծնած է:

Եթէ ուսուելիք բան միայն կերակուրը ըլլար, այս յօդուածը գրելու պէտքը չպիտի զգայինք, եկո՛ւ տես որ ակռայի տակ գլորուելիք շատ բաներ կան որ ոչ պի՛թեք են և ոչ ալ մաքարօնի:

Օրինակի համար, որդին իր հօրը ժառանգութիւնը կ'ուտէ:

Թոթովախօսը կ'ուտէ . . . իր բառերուն կէսը:

Հարս ու կեսուր զիրար կուտեն և ըզգայուն մարդը . . . ինքզինքը:

Խղճամիտ պարտատէրը իր պահանջատէրին իրաւունքը կ'ուտէ:

Բանբանդները իմ և ձեր միսը կուտեն:

Աշխարհիս ամեն մատակարարները իրենց տիրոջ եկամուտները քիչ շատ կ'ուտեն:

Հաս թալողը կ'ուտէ . . . ոտքին ՏԱՍԿԱՆԸ:

Տղաքը ծեծ կ'ուտեն, մեծեր ալ կան ճիշդ տղոց պէս:

Ահագին լէգէոն կը կազմեն անոնք, որ կ'ուտեն . . . նստած տուններուն վարձքը:

Դատը կորսնցնողը վճիռ մը կ'ուտէ և չարագործները քանի մը ամսուան բանտարկութիւն:

Եւ ո՞վ է այն որ կեանքին մէջ երբեք չախ մը չէ կերած:

Հապա՛ կաշառք ուսողները:

Անբերեսները իրենց ամօթը կ'ուտեն և Հրեայի հետ գործ ունեցողները անպատճառ խաղըխ մը:

Հայրեր կան որ կը պնդեն թէ զաւակնին տաան եւ հինգ օրը անգամ մը զոյգ մը կօշիկ կ'ուտէ:

Չար մարդիկ իրենց թշնամին կ'ուտեն աչքով:

Կիներ ալ կան որ փոխանակ չենքով շնորհքով կենալու անանկ Խաչքեր կ'ուտեն որ . . . :

Ամեն օր կը տեսնանք ասոր անոր հախը ու իր եղունգները ուսող մարդիկ:

Իսկ եթէ բան մը կայ որ չէինք ուզեր որ ուտեն, այն ալ մեր բաժանորդագինն է: Փարոս



Պանդոկապետը — Պարոն գինեվաճառ, ինչո՞ւ ձեր երկրի կարմիր գինին ձերմակէն աւելի սուղ կը ծախէք:

Գինեվաճառը — Հէ՛, հապա ի՞նչ գիտցար, կը կարծես թէ մենք ներկը ձրի՞ կառնենք:

Դատաւորը — Ինչո՞վ կրնաս ապացուցադրել թէ այս թաշկինակը քե՛նէ գողցուած է:

Դատախազը — Որովհետեւ նոյն գոյնով թաշկինակներ դեռ ունիմ:

Դատաւորը — Ատիկա ապացոյց չէ ես ալ իմ գրպանս յար և նման թաշկինակ մը ունիմ:

Դատախազը — Ատիկա ալ զարմանալի չէ, որովհետեւ իմ թաշկինակներու շատը գողցուած են . . . :

Յաճախորդը — Պարոն պանդոկապետ, աս պրծօղան թարմ չէ, շատ ծանր հոտ մը ունի:

Պանդոկապետը — Այո՛ գիտեմ, եւ ատոր համար ես ալ ձեզի խոշորկէկ բօսսիօն մը տուի:

Գիւղացի կիներ. (լալով) — Տէր հայր եկայ ձեզի իմաց տալու որ այս գիշեր էրիկս մեռաւ .

Քահանան — Հը՞, արդարեւ շատ ցաւալի է, բայց ո՞ր բժիշկը կանչած էիք .

— Ախ, տէր հայր, բժիշկին բնաւ պէտք չունեցանք. էրիկս ինքնիրենը մեռաւ :

Օսման Բազար

Կարապետ Մինասեան

— Միւսիւ Խաչիկ, իմացա՞ք .

— Ի՞նչ բան .

— Քրիսը կարդուեր է .

— Իրա՞ւ .

— Հապա՛, հէ՛մ անանկ աղւոր հաւուստ աղջիկան մը հետ քի՛ թարիֆ չեմ կրնար ընել .

— Ինտո՞ր եղաւ քի ես չիմացայ .

— Զոնքանչն ալ ճիշիզ է եղեր :

— Վա՛յ անպիտան . իշթէ ադ աղւոր բան . հազար կարգուողին մէկը ադ բախտը չունենար :

Երկու գաւառացի բարեկամներ անցած օր Մուսալլաի սրճարաններէն մէկուն մէջ կը խօսակցէին :

— Վերջապէս որոշեցի՞ր . անպատճառ երկիր պիտի վերադառնա՞մ .

— Այո՛, ստիպուած եմ .

— Բայց եղբայր, պետք է աչքի առջեւ բերես թէ առ այժմ հոն կեանքը քիչ մը գոռարին է, մինչդեռ հոս ազատ օդ կը շնչես :

— Ազատ օդ կը շնչեմ ամա՛ փոր չի կշտացներ կոր :

Անցեալները հայաշատ քաղաքի մը բնակիչներէն հարուստի մը կիներ մեռնե-

լով, զաւկները կը փափագին զայն եկեղեցւոյ շրջափակին մէջ թաղել. Տեղւոյն թաղ . խորհուրդը ՚ի հաշիւ եկեղեցւոյ սնտուկին 200 ոսկի կը պահանջէ անոնց փափագին դոհացում տալու համար :

— Երկու հարիւր ոսկի մի՛ . . . կը գոչէ մեռնողին էրիկը, որ կծծի մըն էր . տահա աղէկ էր չի մեռնէ՛ր . . :

Մարդահամարի պաշտօնեան կը հարցնէ ծերուկի մը .

— Քանի՞ զաւակ ունիս .

Ծերուկը մատներուն վրայ կը սկսի համրել, — Օհանէսը՝ մէկ, Մեղրինէն երկուք, Անիկոտսը՝ իրեք, Վարդանը՝ չորս, Արուսը՝ հինգ . հինգ զաւակ, պա՛րոն :

Հազիւ թէ պաշտօնեան գրիչը ձեռք կ'առնու որ գրէ, ահա ծերուկը անոր թեւէն բռնելով կը գոչէ .

— Պա՛րոն, մոռցայ, մէյ մըն ալ Աղնիւը՝ վեց :

Պաշտօնեան, գրիչը վար դնելով .

— Էյ սանկ քէօչէ պուճախ աղէկ մը փնտուէիր, տահա մնացած չըլլայ :



Սեւ գուլպաները մաքրել

Սեւ դերձանով հիւսուած գուլպաները օճառով մի՛ լուաք, այլ կակուղ թեփի (քէքէք) ջուրի մէջ : Երբոր գուլպան ջուրէն հանէք, լաթի մը մէջ փաթտելով ուժով քամեցէք, յետոյ շուտ մը կրակին վրայ չորցուցէք, և ոչ թէ բաց օդին ու արեւին : Այս միջոցաւ սեւ գուլպաները իրենց գեղեցիկ գոյնը չեն կորսնցնում :

Տ Պ Ա Ր Ա Ն

ՀԱՅԵԼԻ

ՀԱՆԴԷՍԻ

Ամէն լեզուէ հրատարակութիւնք:

Այցետոմս, հասցէտոմս, նամակապաշտօն, հրահրատոմս, բարենիշ. տոմսակ եայլն եայլն թէ՛ պարզ և թէ՛ ոսկեզօծեալ մէկ քանի գոյներով կը տրւուին: Քաղաքներէ եկած յանձնարարութիւնք փութով կը կատարուին: Գին գոհացուցիչ: Դիմել Հայելիի խմբագրութեան:

ԱԶԴ



ՅԱՇԱՐԱՆ ԵՎ ԶԲՕՍԱՐԱՆ

ՏԻԳՐԱՆ ԹԻԻՖԷՆԿԱՃԵԱՆ և ԸՆԿ.

Հաճի Բանաբօին ճիշդ դէմը

Արհեստին մէջ կատարելութեան հասած երիտասարդ հայու մը ձեռամբ սարքուած այս հովասուն, մաքուր ու գեղջական հաստատութիւն ոչ միայն պատիւ կը կը բերէ հայ ճաշակին, այլ եւ մեծ խթան մը կը լլայ որ հայ ու օտար փափկակերներ իրենց գարնանային ու ամառնային ժամագրավայր մը ընեն զայն զբոսնելու ու ճաշելու:

Հարսանեաց և խնձոքներու սպաններ ալ կը գտնուին, որոնք զիւրտմատչելի գիներով վարձու կը տրուին:

«Հայելի»ի Ա. տարւոյ թիւերը կազմեալ կը վաճառին գին տասը ֆր. Ա. Զարպհանէլեանի գրատունը:

Վայրկենական Տպագրութիւն

ԱՅՑԵՏՈՄՍԻ

100 հատը 2 ֆր. ի կը տպագրուի և առնոր տուփին մէջ կը գտնուի Այցետոմսի գործածութեան հրահանգը պարունակոր տետրակ մը, որուն կողքին վրայ այցետոմսին տիրոջանունը տպագրուած պիտի ըլլայ: Դիմել խմբագրութեան: Քաղաքներէ ըլլալիք յանձնարարութեան թղթատարի ծախք 30 սանդիմը յաւանարարողին վրայ է: Դրամի փոխարէն Պուլկարական 5, 10 եւ 15 սանդիմնոց նամակագրօշմ կ'ընդունուի: Կտնսիկ:



ԳՈՒՀԱԿ

Ա Պ Ա Գ Ա Յ Ի

Կամ Զուարճալի Բաղդացոյց Ընտանեկան

Երկսեռ ամէն հասակի ընթերցողաց ընթացալի ժամանցներ տուող սոյն գիրքը կը ծախուի մեկ ֆրանքի, թղթատարի ծախքով դիմել մեր խմբագրութեան:



Կ Ա Լ Վ Ա Ն Ի Ս Թ



Ամեն տեսակ տպագրական կազապարներ պատրաստող, նաեւ անձնական և թէ՛ առևտրական կնիքներ: Սոյն կնիքները որ ըստ վերջին դրութեան պղինձէ կը շինուին, հրապարակի վրայ երեցած քառչուէ կնիքներէ աւելի դիմացկուն են և դիւրութեամբ կը տպագրուին. գինն ալ քառչուի գինէն տարբերութիւն չունի: Քաղաքներէ ըլլալիք յանձնարարութիւնք փութով կը կատարուին: Դիմել ի Վառնա Չիլինկիրէր փողոց թիւ 561: Գին գոհացուցիչ:

Отговоренъ-редакторъ: Н. Драгулев

Печатница «Взаимность» — Варна.